

**ՀԱՎԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ-
ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. գրաբար, համեմատություն-դարձվածային միավորներ (ՀԴՄ), անվանողական ՀԴՄ-ների իմաստային հարաբերություններ, բազմիմաստ ՀԴՄ-ներ, հոմանիշ ՀԴՄ-ներ, հականիշ ՀԴՄ-ներ, ածականական հականշային ՀԴՄ-ներ, բայական հականշային ՀԴՄ-ներ, մակբայական հականշային ՀԴՄ-ներ, ՀԴՄ-ների հականշահոմանշային շարքեր:

Ключевые слова и выражения: грабар, компаративные фразеологические единицы (КФЕ), семантические отношения номинативных КФЕ, многозначные КФЕ, антономичные КФЕ, синонимические КФЕ, антонимичные адъективные КФЕ, антонимичные адverbальные КФЕ, антонимичные глагольные КФЕ, антонимо-синонимические ряды КФЕ.

Key words and phrases: old Armenian, comparative phraseological units (CPU), the semantic relations of nominative CPU, polysemantic CPU, synonymic CPU, antonymic CPU, adjectival antonymic CPU, verbal antonymic CPU, adverbial antonymic CPU, the synonymic-antonymic lines of CPU.

Համեմատություն-դարձվածային միավորները (այսուհետև՝ ՀԴՄ) խոսքի պատկերավորության հիման վրա առաջացած երկանդամ կայուն, պատրաստի վերարտադրելի և մասամբ կամ ամբողջությամբ վերաիմաստավորված կապակցություններ են: Որպես պատրաստի վերարտադրելի յուրահատուկ կառույցներ՝ ՀԴՄ-ները լեզվի դարձվածանու մեջ զգալի տեսակարար կշիռ ունեն: ՀԴՄ-ների հիմքում ընկած պատկերավոր համեմատությունն արտահայտում է որևէ առարկայի ու նրա հատկանիշի կամ գործողության, այլև հատկանիշի հարաբերությունը մեկ այլ առարկայի հատկանիշի, գործողության հիմնական կամ ընդհանուր հատկանիշների հետ: ՀԴՄ-ների կազմության համար անհրաժեշտ է երեք անդամ. համեմատության առարկան կամ սուբյեկտը, համեմատության

հետակետը, որը պատկերավորության կրողն է, և այն ընդհանուրը, որը հատուկ է թե՛ սուրբեկտին և թե՛ համեմատության հենակետին¹:

Հմտ. Եւ ամենայն թագաւորութիւնք (1) փշրեցան (3) որպէս զանաւթ բրտի (2) – Ղեւ., 143: Քաղցր են (3) բանք քո (1) քան զմեղր (2) – Ագաթ., 268:

Հմտ. հետևյալ երկգագաթ և միագագաթ ՀԴՄ-ները. **լիբբ քան զամենայն շուն, գեղեցիկ իբրև զուսին, տեսանել իբր ընդ հայելի օրինակաւ, փշրել որպէս զանաւթ բրտի, զօրէն վարդի, շանց գունակ, օրինակ իմն որպէս փոթորիկ, նման մեղուի, համեմատ Յիսուսի, հանգոյն մահու, զմանութիւն պայծառացեալ խաչին Քրիստոսի, գերդ ի սգի, որչափ յական թօթափել, մինչև ի մահ, ոգւով չափ, ըստ նմանութեան հայելւոջ ցուցանել, ըստ օրինակի երիտասարդի, ըստ կամս անձանց իւրեանց, անարատ ըստ մարդկանէ և այլն:**

Մասնագիտական գրականության մեջ ընդհանուր առմամբ տարբերակվում է ԴՄ-ների, այդ թվում՝ ՀԴՄ-ների երկու տիպ՝

- ա) դարձվածքներ, որոնք համընկնում են բառակապակցություններին,
- բ) դարձվածքներ, որոնք համընկնում են նախադասություններին²:

Բառակապակցության ձևավորումով ՀԴՄ-ներն ըմբռնվում են որպես անվանողական, իսկ նախադասության կառուցվածք ունեցողները՝ հաղորդակցական արժեքով կապակցություններ: Ըստ որում, անվանողական արժեքով ՀԴՄ-ները հարաբերակցվում են բառերի բառաբերականական կարգերին՝ խոսքի մասերին, միաժամանակ շարահյուսական մակարդակում՝ նախադասության կառուցվածքային դիտվածքում, հանդես են գալիս որպես նրա մեկ անդամ: Իսկ հաղորդակցական ՀԴՄ-ները, ձևավորումով լինելով նախադասություններ, վերարտադրվում են որպես խոսքի ավարտուն հատվածներ:

Ա. Անվանողական համեմատություն-դարձվածային միավորների իմաստային հարաբերությունները: Ընդհանրապես լեզվի բառային մակարդակում կատարվում է բառերի իմաստային դասակարգում ըստ այն հարաբերությունների, որոնք գոյություն ունեն մի կողմից՝ բառերի ներսում (նրանց իմաստային կառուցվածքում), մյուս կողմից՝ բառերի միջև: Ըստ որում, բառերի ներսում առկա իմաստային հարաբերությունները ներբառային իրողություններ են. միևնույն բառի իմաստային կառուցվածքում կարող է լինել մենիմաստություն կամ բազմիմաստություն:

¹ Հմտ. А. Г. Назарян, Фразеология современного французского языка, М., “Высшая школа”, 1987, էջ 112:

² St'e A. Д Райхштейн, Сопоставительный анализ немецкой и русской фразеологии, М., “Высшая школа”, 1980, էջ 14:

Իսկ բառերի միջև դիտարկվող իմաստային առնչակցությունները միջբառությային իրողություններ են: Միջբառությային հարաբերություններ ունեցող բառերը դասակարգվում են հոմանիշ, հականիշ և համանուն տեսակների³:

Վերը նշված դիտարկումները հատկանշական են նաև դարձվածքների՝ որպես միջմակարդակային միավորների համար⁴:

Գրաբարի ՀԴՄ-ների մակարդակում քննարկենք դարձվածային իմաստային (հականշային) հարաբերություններն այդօրինակ միավորների միջև:

Բ. Միջկապակցական իրողություններ: Այդօրինակ իմաստային հարաբերություններ են համատեղում մեկից ավելի ՀԴՄ-ներ: Ըստ որում, վերջիններիս շրջանակներում ի հայտ են գալիս գերազանցապես հոմանշային և հականշային հարաբերություններ:

Հականիշ ՀԴՄ-ներ: Այդօրինակ ՀԴՄ-երը⁵ ներառվում են միննույն խմբում՝ ըստ խոսքիմասային ընդհանուր արժեքի և բառիմաստային հակադրությունների: Դիտարկենք հետևյալ հականիշ ՀԴՄ-ների իմաստները.

իբրև կանխագետ (իբրագեկ լինելով) – **իբրև զանգետս** (առանց իմանալու, անիրագեկ կերպով)

որպես յորձան ինչ սաստիկ (բուռն կերպով, արագ) – **որպես կիսամեռք** (շատ դանդաղ, թույլ կերպով)

մաքուր որպես զլոյս (շատ մաքուր) – **խոզի նման** (շատ փնթի՝ կեղտոտ)

իբրև զկանթեղս անշիջանելի վառեալ բորբոքել (խիստ կարմրել՝ բորբոքվել) – **իբրև զգոյն դալկան դեղնացեալ շրջել** (խիստ դեղնել՝ սփրթնել)

իբրև զձինս սպիտակել (խիստ սպիտակել) – **իբրև զածուխ սևանալ** (խիստ սևանալ) և այլն:

1. Հականիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ ձևաբանական արժեքի: Ըստ այս սկզբունքի՝ գրաբարում հիմնականում առանձնացվում են անականական, բայական և մակբայական հականշային ՀԴՄ-ներ:

³ Տե՛ս Լ. Մ. Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն, Ե., «Զանգակ-97» հրատ., 2008, էջ 139- 142:

⁴ Ընդհանրապես դարձվածքն առաջին հերթին բառակապակցություն է՝ հարաբերակից բառին, և վերջինիս բնորոշ իրողություններից շատերը տիպական են նաև դարձվածքի համար:

⁵ Առհասարակ հականշային ԴՄ-ների մասին տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Հայոց լեզու, բառ և խոսք, Ե., «Լույս» հրատ., 1978, էջ 162:

ա) Ածականի արժեքով հականիշ ՀԴՄ-ներ: Այդօրինակ հականշային ՀԴՄ-ները պատկանում են ածականի քերականական կարգին՝ ցույց տալով առարկայի հատկանիշ՝ իմաստային ներհակությամբ: Հմմտ.

դառնագոյն քան զլեղի (շատ դառն) – **քաղցր քան զմեղր** (շատ քաղցր)

սպառնական քան զոսկի (խիստ պատվական) – **վատթարագոյն քան զշուն** (խիստ պատվազուրկ՝ արգահատելի)

սպիտակ որպէս զձին // ~ **իբրև զեղեամն ի վերայ երկրի, իբրև զասք** // **զձին սպիտակ** (չափազանց սպիտակ, ձյունաճերմակ) – **սև որպէս զածուխ, սեւա իբրև զագռու** // **զկապերտ այծեայ** (չափազանց սև)

պիղծ իբրև զԵսաւ (չափազանց պիղծ) – **մաքուր որպէս զլոյս** (չափազանց մաքուր, անբասիր, անարատ)

խորագէտ իբրև զօձ (չափազանց իմաստուն) – **քան զէշ** // **զեզն պակասամտագոյն** (չափազանց հիմար, պարզամիտ) և այլն:

Հմմտ. Եղերուք ... **խորագէտք իբրև զօձս** (Ագաթ., 306): **Քան զեզն և զէշ** ևս **պակասամտագոյն** գտայք (ն. տ., 307):

բ) Բայի արժեքով հականիշ ՀԴՄ-ներ: Այդ կարգի հականիշներն ունեն խոսքիմասային միևնույն պատկանելությունը. ցույց են տալիս գործողություն, եղելություն, վիճակ՝ հանդես գալով իմաստային քննարկությամբ: Հմմտ.

հասանել ի վերայ իբրև զխոյանալ արծուոյ (համառորեն հետամտել, հարձակվել մեկի // մի բանի վրա) – **խորշել իբրև ի պղծութեանց** (խիստ խուսափել, փախչել)

իբրև զսիրելի որդի գգուել (սաստիկ սիրել՝ նվիրվել) – **իբրև զանհաւատ առ ոտն հարկանել** (սաստիկ արհամարհել, քամահրել)

զհետ մտանել որպէս առիւծ ընդ նապաստակ (խիստ հետապնդել) – **հրաժարել իբրև ի պղծոյ** (խիստ խորշել)

իբրև զկանթեղ անշիջանելի վառեալ բորբոքել(իմ) (խիստ կարմրել, բոցավառվել) – **իբրև զգոյն դալկան դեղնացեալ շրջել** (խիստ գունատվել՝ դեղնել)

իբրև զծուխ պակասել (խիստ արագ և աննկատելի սպառվել) – **իբրև զաստեղս բազմանալ** (խիստ արագ բազմանալ)

պահել իբրև զբիբ ական (իբրև ամենաթանկ բան պահել-պահպանել) – **իբրև զաւելորդ ի բաց թքանել** (խիստ արհամարհանքով դեն նետել) և այլն:

Հմմտ. **Պահեցեր զմեզ իբրև զբիբ ական** (Ագաթ., 107): **Քանզի առաջին անկեալ սերմնն զայլսն իբրեւ զաւելորդս ի բաց թքանէ** (Եզն., 133):

գ) Մակբայի արժեքով հականիշ ՀԴՄ-ներ: Այդպիսի ՀԴՄ-ները համախմբվում են միևնույն շարքում՝ ցույց տալով գործողության կամ հատկանիշի հատկանիշ՝ իմաստային ներհակությամբ: Հմմտ.

իբրև զանգոր տղայ (չափազանց թույլ՝ անօգնական վիճակում, անգոր կերպով) – **իբրև զհիւստեանն Հռովմայեցոց** (չափազանց զորեղ կերպով, հզորաբար)

իբրև դժոխք (խիստ դժոխային՝ սարսափելի կերպով) – **նման Եղեման դրախտին** (խիստ երանելի՝ դրախտային կերպով)

որպէս նապաստակք (խիստ վախենալով) – **նման առիւծու** (խիստ անվախ կերպով, խիզախաբար)

որպէս կենդանի ի գերեզմանի (խիստ վատ՝ անելանելի վիճակում) – **գորէն վարդի** (խիստ լավ՝ ապահով՝ բարվոք վիճակում):

ըստ մարգարեիցն // առաքելոցն նմանութեան (գրասրտորեն) – **իբրև զգազանս վայրենիս // արինախանն** (դաժանաբար) և այլն:

Հմմտ. Եւ ինքն ըստ մարգարեիցն և կամ ըստ առաքելոցն նմանութեան զողորմածութիւնս ցուցանէր (Բուգ., 66): Իբրև զգազանս վայրենիս արինախանն ուսուցին զնոսա (Եղ., 161):

2. Հականիշ ՀԴՄ-ների դասակարգումն ըստ կազմության և իմաստային առանձնահատկությունների: ՀԴՄ-ներում հականշություն արտահայտելու եղանակներն ու միջոցները տարբեր են: ՀԴՄ-ների իմաստային հակադրությունը կարող է դրսևորվել՝

ա) Գերադաս անդամների միջոցով.

սպիտակ որպէս զձին (շատ սպիտակ) – **սև որպէս զածուխ // զագռաւ** (շատ սև)

հրաժարել իբրև ի պղծոյ (սաստիկ խորշել՝ հրաժարվել) – **ընկալել քան զոսկի ընտիր** (շատ-շատ ձգտել՝ ընդունել)

պիղծ իբրև զԵսաւ (չափազանց պիղծ) – **մաքուր որպէս զլոյս** (չափազանց մաքուր, անբասիր)

իբրև զաստեղս բազմանալ (շատ արագ բազմանալ) – **իբրև զծուխ պակասել** (շատ արագ՝ աննկատելի պակասել) և այլն:

Հմմտ. Պաշտամունք սրբութեան **իբրև զաստեղս բազմասցին** (Ագաթ., 390): **Իբրև զծուխ պակասեցան** (ն., տ. 406):

բ) Ստորադաս բաղադրիչներով, ըստ որում, այդօրինակ հականշային ՀԴՄ-ներ հանդիպում են հիմնականում մակբայական կապակցությունների շրջանակներում: Այս դեպքում իմաստային հակադրությունն արտահայտվում է «նախադրություն + խնդիր» - «նախադրություն + խնդիր» (միագազաթ) կապակցությունների միջոցով:

Հմմտ.

իբրև տէր (տիրաբար, ենթարկելով) – **իբրև ծառայ** (ստրկամտորեն, հնազանդվելով)

իբրև դժոխք (շատ դաժան՝ դժոխային վիճակում) – **նման Եղեման դրախտին** (շատ երանելի՝ դրախտային վիճակում)

իբրև ի թշնամոյ վերայ (խիստ թշնամաբար) – **իբրև ընկերի** (խիստ մտերմաբար) և այլն:

Հմմտ. **Իբրև ի թշնամոյ վերայ** խոստանայր վրեժ խնդրել (Ագաթ., 20): Ետուր ինձ պատասխանի **իբրև ընկերի** (ն. տ., 39):

զ) Միաժամանակ և՛ գերադաս, և՛ ստորադաս բաղադրիչներով, ըստ որում, այդօրինակ հականիշները հազվադեպ են ՀԴՄ-ների շրջանակներում.

դառնագոյն քան զլեղի (շատ դառը) – **քաղցր քան զմեղր** (շատ քաղցր)
իբրև զձին սպիտակել (խիստ սպիտակել) – **իբրև զածուխ սևանալ** (խիստ սևանալ)

խորագետք իբրև զօձս (շատ խորամանկ) – **միամիտք իբրև զաղաւնիս** (շատ միամիտ) և այլն:

Հմմտ. Եղերուք **խորագետք իբրև զօձս** (Ագաթ., 306): Եղերուք, ասէ, **միամիտք իբրև զաղաւնիս** (ն. տ., 307):

դ) Իրենց ընդհանուր իմաստներով, անկախ բառային հակադրություններից: Այդ կարգի հականիշ ՀԴՄ-ները գերակշիռ մեծամասնություն են կազմում: Նրանցում առաջին պլան մղվում է ոչ թե բաղադրիչների իմաստային ներհակությունը, այլ ընդհանուր իմաստային բևեռայնությունը:

Հմմտ. **իբրև զանգոր տղայ** (խիստ անգոր՝ անօգնական կերպով) – **իբրև զհիւպատեանն Հռովմայեցոց** (խիստ հզոր կերպով)

ըստ առաքելոցն նմանութեան (չափազանց գթասրտորեն) – **օրինակ իմն չարագոյն գազանի ինչ** (խիստ դաժանաբար, անգթորեն)

որպէս կենդանի ի գերեզմանի (խիստ վատ վիճակում) – **զօրէն վարդի** (խիստ լավ վիճակում)

որպէս անխօս անասունս (խիստ հնազանդվելով, ծառայամտորեն) – **որպէս ի քնոյ արթացեալք** (հանկարծակի ըմբոստանալով)

երկրպագել իբրև տեառն (խիստ պատկառել՝ պաշտել) – **իբրև հաւու խաղալ նովաւ** (խիստ ծաղրել՝ անարգել)

իբրև զջուրս հեղեղաց բազմանալ (արագորեն բազմանալ) – **իբրև զձին հալել** (արագորեն սպառվել՝ քանալ՝ պակասել)

քան զվիռ ևս չար կտտել (խիստ խոցել, ցավ պատճառել) – **տալ թևս որպէս զաղաւնոյ** (խիստ ոգևորել, ուրախություն պարգևել)

պատուական քան զոսկի // ~ իբրև զմարգարիտն (խիստ պատվական՝ հարգարժան) – **լիբք քան զամենայն շուն** (խիստ ստոր՝ արգահատելի) և այլն:

Հմմտ. Իսկ զհոգևորացն առաքինութիւն աստուածասէր սիրողացն մեծութիւն **իբրև զմարգարիտն պատուական** (Ագաթ., 6): Այլ գիտասօշի, զի **լիբք քան զամենայն շուն** իցես դու (Ղեւ., 38):

Հստ իմաստային առանձնահատկությունների՝ ՀԴՄ-ներում առանձնացվում են՝

ա) Լիարժեք հականիշներ, որոնք ունեն բառային իմաստների ներհակություն, առարկայական միանման հարաբերակցություն, ոճական նույն առանձնահատկությունը.

**իբրև զձին սպիտակ – սև որպես զածուխ
դառնագոյն քան զլեղի – քաղցր քան զմեղր**

իբրև տէր – իբրև ծառայ

իբրև ի թշնամոյ վերայ - իբրև ընկերի

իբրև դժոխք – նման Եդեման դրախտին

որպես նապաստակք – նման առիծու

իբրև զձին սպիտակել – իբրև զածուխ սևանալ

իբրև ի թանձրամած խաւարի – որպես ի խաւարէն գերծեալք ի լոյս և այլն:

Հմտ. Այնպիսիքն բնակեալ ի կեանս իւրեանց **իբրև ի թանձրամած խաւարի** և ոգիքն արգելեալք ի մարմնի իբրև զկենդանի ի գերեզմանի (Եղ., I յեղ.): **Որպես ի խաւարէն գերծեալք ի լոյս** խնդային (Փարպ., 16):

բ) Ոչ լիարժեք հականիշներ, որոնք վերը նշված կողմերից որևէ մեկով տարբերություն են ցուցաբերում.

օրինակ իմն թագաւորական պատիւ – պիղծ գագանաց օրինակ

բանիւք իւրեանց խոցել որպես սրով – տալ թես որպես եղբայր սիրելի

իբրև զկանթեղ անշիջանելի վառեալ բորբոքել – իբրև զգոյն դալկան դեղնացեալ շրջել

նման դեղոց մահու – նման քաղցրութեան մեղու և այլն:

Հմտ. Զխաբեական զեպիսկոպոսութիւնս **նման դեղոց մահու** արբուցեալ սրբոյն հեղձուցին (Փարպ., 202): Որոյ բանքն **նման քաղցրութեան մեղու** բղխէին ի բերանոյ արդարոյն (ն.տ., 70):

3. Հականիշ և բազմիմաստ ՀԴՄ-ներ: ՀԴՄ-ների հականշությունն ու բազմիմաստությունը որոշակի ընդհանրություններ ունեն: Միննույն բազմիմաստ ՀԴՄ-ն այլ ՀԴՄ-ների հետ հականշային հարաբերությունների մեջ է մտնում իր իմաստներից որևէ մեկով:

Հմտ. **Խոզի նման** ՀԴՄ-ն բազմիմաստ է, ունի՝ 1. «շատ կեղտոտ», 2. «շատ պիղծ» իմաստները, որոնցով էլ հականշային գույգեր է կազմում. 1. **խոզի նման -պայծառագոյն որպես զլոյս**, 2. **խոզի նման - անարատ ըստ մարդկանէ:**

Քան զհրեշտակս ՀԴՄ-ն ունի՝ 1. «շատ գեղեցիկ», 2. «շատ բարի» իմաստները: Այն հականշային գույգ է կազմում **չար քան զթոյնս իժից** ՀԴՄ-ի հետ իր երկրորդ իմաստով:

Նման եղևման դրախտին ՀԴՄ-ն ունի՝ 1. «շատ գեղեցիկ» (ած.), 2. «շատ լավ վիճակում» (մկբ.) իմաստները: Այն հականշային հարաբերության մեջ է մտնում **իբրև դժոխք** ՀԴՄ-ի հետ իր երկրորդ իմաստով:

Օրինակ իմն կիսամահ ՀԴՄ-ն ունի՝ 1. «շատ դանդաղ» 2. «շատ տխուր, հուսահատ» իմաստները. **1. օրինակ իմն կիսամահ - իբրև զփայլակն, 2. օրինակ իմն կիսամահ – իբրև զգուարթունս:**

4. ՀԴՄ-ների հականշային դրսևորումները: ՀԴՄ-ների միջև հականշայությունը տարբեր դրսևորումներ ունի, որ պայմանավորված է հականշային եզրերի կառուցվածքային կամ քանակային արտահայտությամբ: Տվյալ դեպքում գրաբարում հականշայությունն արտահայտվում է երեք ձևով. մի դեպքում այն դրսևորվում է ՀԴՄ-ների զույգի միջև (հականշայության եզրերը ներհակ իմաստներով կապակցություններ են), երկրորդ դեպքում ՀԴՄ-ն իմաստային հակադրություն է կազմում ՀԴՄ-ների զույգի հետ, երրորդ դեպքում առկա են հոմանշային շարքեր, որոնք միմյանց նկատմամբ ցուցաբերում են հականշային հարաբերություն:

Դիտարկենք հականշային հարաբերությունների այս կարգի դրսևորումները գրաբարի ՀԴՄ-ների հարթության վրա:

ա) Հականշայություն ՀԴՄ-ների (զույգի) միջև.

Այսպիսի հականիշները, բնականաբար, ունեն միևնույն խոսքիմասային արժեքը. տվյալ դեպքում ՀԴՄ-ների ձևաբանական արժեքների առանձնացում չենք կատարի, այլ ցույց կտանք դրանց իմաստային ներհակությունը: Հմտ.

իբրև զթախձեալ սգաւոր (շատ տխուր) – **իբրև զգուարթունս** (շատ անհոգ ուրախ)

իբրև զձիւն սպիտակել (խիստ սպիտակել) – **իբրև զածուխ սևանալ** (խիստ սևանալ)

իբրև տէր (խիստ տիրաբար, իշխելով, ենթարկելով) – **իբրև զծառայ** (խիստ խոնարհաբար, ստրկամտորեն):

բ) Հականշայություն ՀԴՄ-ների զույգի հետ.

Որևէ ՀԴՄ-ի հետ հականշային հարաբերություն կարող է կազմել իմաստով նրան ներհակ ՀԴՄ-ների զույգ, որի բաղադրիչները (ՀԴՄ-ները) միմյանց նկատմամբ ունեն հոմանշային հարաբերություն: Հմտ.

իբրև ամուլք հաւանք եւ հաւասարք (խիստ ներդաշնակ՝ հակամետ) – **հակառակ որպէս սպիտակ թխոյ // հակառակ որպէս քաղցր դառին** (խիստ ներհակ՝ հակառակ)

իբրև զգազանս վայրենիս (վայրենաբար, հրեշաբար, դաժանորեն) – **ըստ մարգարէիցն նմանութեան // ըստ առաքելոցն նմանութեան** (մարգարեաբար, սրբորեն, գթասրտորեն)

խօսել ընդ ումանս իբրև ընդ տղայս (արհամարհել, նվաստացնել) - երկրպագել իբրև Տեառն // պատուել ոք իբրև զԱստուած (մեծարել, երկրպագել):

զ) Հականշություն ՀԴՄ-ների շարքերի միջև.

Հոմանշային հարաբերություն արտահայտող ՀԴՄ-ների շարքը, որը բնութագրվում է իմաստային որոշակի ընդհանրությամբ, կարող է իմաստային հակադրություն կազմել մեկ այլ հոմանշային շարքի հետ. այս դեպքում հականշությունն արտահայտվում է հոմանշային տարբեր շարքերի միջև: Հմմտ.

Իբրև զասր սպիտակ // իբրև զձին սպիտակ // սպիտակ իբրև զեղեամն ի վերայ երկրի // ըստ նմանութեան կաթինն (չափազանց սպիտակ) - սև որպէս զածուխ // սև որպէս զագռու // սև որպէս զկապերտ այծեայ (չափազանց սև):

Պիղծ իբրև զԵսաւ // լիբք քան զամենայն շուն // չար քան զղոյնս իծից (սաստիկ պիղծ՝ չար) - մաքուր որպէս զլոյս // լուսաւոր որպէս ական բիբ // պայծառագոյն քան զլոյս (մաքուր, լուսավոր):

Ըստ առաքելոցն նմանութեան // ըստ մարգարէիցն նմանութեան (գլխաւորությամբ, խոհեմաբար) - օրինակ իմն չարագոյն գազանի ինչ // նման Յուդայի // որպէս զորդին ուրացող (դաժանաբար, ուրանալով):

Զօրեն որպէս վարակեալ ինչ շղթայիւք // որպէս ոչխար // որպէս զծառայ // որպէս անասունս // իբրև ի թանձրամած խաւարի // իբրև զկենդանի ի գերեզմանի (զլխահակ, աշխարհից կտրված) - որպէս ի քնոյ արթնացեալ // որպէս ի քնոյ ընդոստուցեալ // որպէս ի խաւարէն զերծեալք // որպէս շանթահար // որպէս այսահար (ըմբոստ, հանկարծակի, միանգամից):

Պահել իբրև զմարգարիտ պատուական // ամփոփել իբրև զցորեան ի շտեմարանս // պահել իբրև զբիբ ական (խնամել, արժևորել) - հրաժարել իբրև ի պղծոյ // իբրև զաւելորդ ի բաց թքանել // իբրև զխոտան ի բաց թողուլ // հատանել ընկենուլ իբրև զխոտան (հրաժարվել, դեն նետել):

Իբրև զաստեղս բազմանալ // իբրև զգետս հեղեղաց բազմանալ // իբրև զջուրս հեղեղաց բազմանալ (բազմանալ, ավելանալ) - իբրև զծուխ պակասել // իբրև զձին հալել (պակասել, նվազել):

Բանիւք իւրենաց խոցել որպէս սրով // քան զփուշ ևս չար կտտել // խոցոտել ի մահ (խոսքերով վիրավորել խոցել) - տալ թես որպէս զաղաւնոյ // օգնել որպէս եղբայր սիրելի (սփոփել, օգնել) և այլն:

Ինչպէս երևում է վերոբերյալ օրինակներից, գրաբարում չափազանց կենսունակ են հականշային այն դրսևորումները, որոնք գոյություն ունեն ՀԴՄ-ների հոմանշային շարքերի միջև: Դա մյուս կողմից խոսում է այն իրողության մասին, որ գրաբարում կենսունակ են նաև ՀԴՄ-ների

հոմանշային շարքերը, որոնք որոշակի դեր ունեն լեզվի պատկերավորման համակարգի դրսևորումների համատեքստում:

Այսպիսով՝

1. ՀԴՄ-ները պատկերավորության հիման վրա առաջացած երկանդամ (ծավալումով կամ առանց ծավալման) ստորադասական կապակցություններ են:

2. Այդօրինակ կապակցությունների ձևավորմանը մասնակցում են **իբր // իբրև, որպես, քան, նման, գունակ // որպես գունակ, արինակ // արինակ իմն, զօրեն, զերդ, զոյգ, չափ, որչափ, մինչև, համեմատ, հանգոյն, նմանությին** հոլովառու բառերը (նախադրությունները), ինչպես նաև **ըստ + տրական, ըստ + հայցական, ըստ + Բացառական** կառույցները:

3. Ըստ հաղորդակցական գործընթացի հետ ունեցած փոխհարաբերության՝ ՀԴՄ-ները լինում են անվանողական և հաղորդակցական: Անվանողական ՀԴՄ-ները զուրկ են ստորոգումային հատկանիշից: Հաղորդակցական ՀԴՄ-ները հանդես են գալիս որպես նախադասություն-դարձվածքներ:

4. Ըստ ներկայակցական իմաստային հարաբերությունների՝ ՀԴՄ-ներում տարբերակվում են մենիմաստ և բազմիմաստ, ըստ միջկապակցական հարաբերությունների՝ հոմանիշ (նույնանիշ ու համանիշ) և հականիշ ՀԴՄ-ներ:

ՀԴՄ-ների հոմանշությունն ու բազմիմաստությունը, հականշությունն ու բազմիմաստությունը սերտորեն փոխկապակցված են:

6. Հականշությունը որպես միջկապակցական իրողություն, երեք կարգի դրսևորում ունի՝

- ա) հականշային զույգի անդամների միջև,
- բ) ՀԴՄ-ի և նրան հականիշ զույգի միջև,
- գ) հոմանշային տարբեր շարքերի միջև:

Սկզբնաղբյուրների համառոտագրություններ

Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:

Բուզ. - Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Եգն. - Եգնկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղ. - Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:

Ղեւ. - Ղեւոնդեայ վարդապետի Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887:

Փարպ. - Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տիֆլիս, 1904:

Լ. Ավետիսյան

**Հականշությունը հին հայերենի համեմատություն-դարձվածային
միավորներում
Ամփոփում**

Համեմատություն-դարձվածային միավորները (ՀԴՄ) խոսքի պատկերավորության հիման վրա առաջացած երկանդամ կայուն, պատրաստի վերարտադրելի և մասամբ կամ ամբողջությամբ վերախմաստավորված կապակցություններ են:

Որպես պատրաստի վերարտադրելի յուրահատուկ կառույցներ՝ ՀԴՄ-ները լեզվի դարձվածանու մեջ զգալի տեսակարար կշիռ ունեն:

Ըստ հաղորդակցական գործընթացի հետ ունեցած փոխհարաբերության՝ ՀԴՄ-ները լինում են անվանողական և հաղորդակցական:

Հին հայերենի ՀԴՄ-ներին բնորոշ են հոմանշային և հականշային հարաբերությունները:

Հին հայերենի անվանողական ՀԴՄ-ներում առանձնացվում են ածականական, բայական և մակբայական հոմանշային և հականշային ՀԴՄ-ներ:

Հականիշ ՀԴՄ-ները, հոմանշային հարաբերությունների մեջ մտնելով այլ ՀԴՄ-ների հետ, ձևավորում են յուրօրինակ հականշահոմանշային շարքեր:

Л. Аветисян

Антономия в компаративных фразеологических единицах грабара

Резюме

КФЕ-это возникшие на образной основе бинарные устойчивые, переосмысленные (частично или целостно) обороты.

КФЕ имеют определенную значимость во фразеологической системе языка.

В плане соотнесенности с актом коммуникации КФЕ делятся на два больших класса– номинативные и коммуникативные.

Для КФЕ грабара характерны синонимические и антономические отношения.

Среди номинативных КФЕ грабара различаются синонимические и антонимичные адъективные, глагольные и адverbальные КФЕ.

Антонимичные КФЕ вступают в синонимические связи с другими фразеологизмами и образуют антонимо-синонимические своеобразные ряды.

L. Avetisyan

The antonymy in comparative phraseological units of old Armenian

Summary

The comparative phraseological units (CPU) built on imagination are stable binominal compounds, those components are linked.

Among language structures CPU are of considerable number.

Due to the communication act CPU of old Armenian are divided into two big classes: nominative and communicative.

The synonymous and antonymous relations are typical of nominative CPU of old Armenian.

Among nominative CPU of old Armenian adjectival, adverbial and verbal synonymic and antonymic compounds are distinguished.

The antonymic CPU are included into synonymic correlation with other CPU making certain synonymic-antonymic lines.